Պարույր Սևակ

Անքնություն

Քունը չի տանում,
Դու էլ մի քնիր,
Հետս էլ կրկընիր,
Որ Հայաստանում
Հիմա գարունը
Բացվել է արդեն.
Թողած հին հունը՝
Գետերը հորդել,
Պղտոր ու խելառ
Դես-դեն են խփում:
Կանաչից հարբած՝
Գառներ ու հորթեր
Լեռնալանջերին
Խայտում են, ծփում:
Մոշու թփեր են
Չորս բոլոր աճել:
Մի մոլոր գառնուկ
Պճեղն է դաշել
Ոլոր կածանի
Կիսաթաց հողին:
Խազալի վրա

Մի բուռ հին կաղին
Տվել է իրեն
Լո՛ւռ արևկողի:
Կոճղը դարձըրած
Իր համար սեղան՝
Պսակ է գործում
Մի պուճուր տղա
Ու գցում վզին
Իր ծիրան եզի:
Իսկ մա՛յրը տղի…
Պառավն անտեղի՛,
Զո՛ւր է տեղ գցել
Քնելու համար.
Նա, ինձ պես, գուցե
Չի քնել հիմա,
Նա՛, որին դեմքով
Ես շա՛տ եմ նման…
…Քունըս չի տանում,
Դու էլ մի քնիր,
Հետս էլ կրկընիր,
Թե ի՞նչ եմ անում
Ես ի՞նչ եմ անում
Ոչ Հայաստանում…

10-11.XI.1956թ.
Մոսկվա